ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«20» մայիսի 2024թ.**
Ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ՝ Լուսինե Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝
«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Գոռ Ծառուկյան
Էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության քաղաքականության մշակման բաժնի պետ՝ Համլետ Մկրտչյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ՝ Սվետլանա Սահակյան
Էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության փորձագետ՝ Հայկուհի Գևորգյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության գլխավոր մասնագետ՝ Էդուարդ Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

1. Տեղեկություններ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1.1 ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգվել է: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ

1.1.1 «Դոմինո վիդեո փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից կցված փաստաթղթերում բացակայում են հայտի ապահովումը և որակավորման փաստաթղթերը: Հիմք ընդունելով «Դոմինո վիդեո փրոդաքշն» ՍՊԸ-ի 10.05.2024թ. գրությունը հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն ճշտելու համար փաստաթղթերի բեռնման նպատակով ծրագրային տեխնիկական խնդիրների առկայությունը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2024թ. № 03/26-1/10346-2024 գրության համաձայն «Դոմինո վիդեո փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի բացակայությունը չի հանդիսանում համակարգի ծրագրային խնդիր, իսկ ինչ վերաբերվում է հայտի փաթեթում մեծածավալ ֆայլերի կցագրման հնարավորությանը, ապա կցագրման համար պատվիրատուի կողմից համակարգում նախատեսվել է մինչև 50ՄԲ ծավալ, իսկ հայտի ապահովման փաստաթղթի կցագրման համար՝ 10ՄԲ ծավալ:

1.1.2 «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին.

- ներկայացված հայտում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարության կից ներկայացված փաստաթղթերում բացակայում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, Երևանի քաղաքապետարանի, Վարչապետի աշխատակազմի, «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի, «Starmus»-ի հետ կնքված պայմանագրերի պատճենները, ինչպես նաև «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:)
- ներկայացված հայտում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատելու համար «Հաղորդավար 2»-ի անձը հաստատող փաստաթղթում, նախնական պայմանագրում, ինքնակենսագրությունում և տեղեկանքում առկա է անվան անհամապատասխանություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 , դեմ- 0

2. Տեղեկատվություն հրավերի շրջանակներում ներկայացված հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հրավերի շրջանակներում հարցումներ չեն ստացվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 , դեմ- 0

3. Հանձնաժողովի կայացրած որոշումները

3.1 Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց մերժել «Դոմինո վիդեո փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով հրավերի 7.6 կետը (Մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան):

3.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 , դեմ- 0 :

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենան **սույն թվականի մայիսի 22-ին ժամը 15:00-ին** ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 , դեմ- 0 :

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Լուսինե Գասպարյան	
Անդամներ՝	Գոռ Ծառուկյան	
	Համլետ Մկրտչյան	
	Սվետլանա Սահակյան	
	Հայկուհի Գևորգյան	
	Էդուարդ Ներսիսյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	